# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՆՆԴԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-24/1

ք.Երևան «26» «12» 2023թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Կամո Ամիրխանյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն՝ Գևորգ Գալստյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Կատարող»), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 14.12.2023թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-24/1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 7.5, 7.15 և 7.16 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ սննդի պատրաստման ծառայությունների ձեռքբերման համար 2023թ.-ի ընթացքում նախատեսվել են 110.011.000 ( մեկ հարյուր տաս միլիոն տասնմեկ հազար) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցներ և «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է նույն գումարի չափով կանխավճարի բանկային երաշխիքը, ուստի կողմերը որոշեցին՝ Պայմանագրով նախատեսել կանխավճար՝ 110.011.000 (հարյուր տաս միլիոն տասնմեկ հազար) ՀՀ դրամի չափով և Պայմանագրում 4.1.1 կետը հաստատել նոր խմբագրությամբ՝

«4.1.1 Պայմանագրի գնից՝ 110.011.000 (հարյուր տաս միլիոն տասնմեկ հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:»

1.2 Կողմերը որոշեցին՝ հաստատել Պայմանագրի N2 հավելվածը՝ «Վճարման ժամանակացույց»-ը, նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-24/1 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և իր N1 հավելվածը կազմված են 2 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 հավելվածը համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն | «ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արշակունյաց 63 | ՀՀ. ք. Երևան, Դավիթաշեն 4 թղմ, շ. 39, բն.26 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011175016 | Հ/Հ 1150015793390100 |
| ՀՎՀՀ 02204739 | ՀՎՀՀ 00119157 |
| ՔԿ ծառայության գլխավոր քարտուղարի Պ/Կ<br>Կ. Ամիրխանյան | Տնօրեն՝<br>Գ. Գալստյան |
| ---------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ | ---------------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |

*Հավելված N 1*
*« 26 » « 12 » 2023թ. կնքված*
*ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-24/1 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Կանխավճարի վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | դեկտեմբեր | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 55321100/501 | Սննդի պատրաստման ծառայություններ, ՀՀ ԱՆ բոլոր ՔԿՀ-ներում | 110.011.000 (մեկ հարյուր տաս միլիոն տասնմեկ հազար) | «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն | | | | | | | | | | | | |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց 63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայության
գլխավոր քարտուղարի Պ/Կ
Կ. Ամիրխանյան

--------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԷԼԻՏ-ՖՈՒԴ» ՍՊԸ
ՀՀ. ք. Երևան, Դավիթաշեն 4 թղմ, շ. 39, բն.26
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150015793390100
ՀՎՀՀ 00119157

Տնօրեն՝
Գ. Գալստյան

--------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ